VIVA MTS



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

## SOCIAL INVESTMENTS

ՀԱՏՈՐ | EDITION 15

VIVA MTS

**Հարգելի՛ բարեկամ,**

Երկար տարիներ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը կիրառելով որպես կառավարման մոդել և հավատարիմ մնալով իր արժեքներին՝ Վիվա–ՄՏՍ–ը շարունակաբար աջակցում և ներդրումներ է իրականացնում երկրի համար ռազմավարական նշանակության ամենատարբեր ոլորտներում: Ինչպես և նախկինում, առաջնահերթություն է տրվում համայնքների զարգացմանը, բնապահպանությանը, բնակարանաշինությանը, կրթության, մշակույթի և գիտության ոլորտների խթանմանն ուղղված ծրագրերին:

2021 թվականը, ինչպես և նախորդող տարին, լինելով բարդ և մարտահրավերներով լի, մեծ ջանքեր է պահանջել փոփոխվող պայմաններին ադապտացման, սոցիալական պատասխանատվության ծրագրերի ճիշտ թիրախավորման և նպատակային իրականացման համար: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել հատկապես Արցախից տեղահանված ընտանիքները և, ինչպես նախկինում՝ հասարակության սոցիալապես խոցելի խմբերը: Մեզ համար կարևոր ցուցիչ է, երբ վերջնարդյունքում հաջողվում է գրանցել այնպիսի արդյունքներ, որոնք գերազանցում են նախապես սահմանված թիրախները:

Որպես քաղաքացի՝ յուրաքանչյուրիս պարտքն է գործել սոցիալապես պատասխանատու կերպով՝ ի նպաստ երկրի բարօրությանն ու ընդհանուրի շահերին, և ես վստահեցնում եմ, որ Վիվա–ՄՏՍ–ի գործունեության հիմքում հենց այս սկզբունքների պահպանումն ու կյանքի կոչումն է:

**Dear friend,**

Applying corporate social responsibility as a management model for many years, and staying true to its values, Viva–MTS has continuously supported and invested in various areas of strategic importance for the country. As before, priority has been given to programs aimed at community development, and at promoting initiatives targeted at environmental conservation, housing, as well as education, culture, and science.

2021, like the previous year, has been abundant in difficulties and challenges, requiring great efforts to adapt to the changing conditions over time, to properly target and implement social responsibility programs. Particular attention was paid to families displaced from Artsakh, and socially vulnerable groups. It is an important indicator for us, to achieve results that exceed the predetermined targets.

As citizens, it is each and everyone's duty to act in a socially responsible manner for the well-being of our country and in the common interest. I can assure you that the activities of Viva–MTS as a Company stem from the observance and implementation of these principles.



**Ռալֆ Յիրիկյան**
Վիվա–ՄՏՍ–ի գլխավոր տնօրեն

**Ralph Yirikian**
Viva–MTS General Manager



## Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
## Information and Communication Technologies

• Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative
• Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad

## Կրթություն
## Education

• Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
Provision of tuition fee to students of universities of Armenia
• Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին
Support to Smart Solutions Laboratories
• Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին
Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House

## Մշակույթ
## Culture

• Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO

## Շրջակա միջավայրի պաշտպանություն
## Environmental Protection

• Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets
•Աջակցություն Գնիշիկ բնակավայրի տարածքում իրականացված ծառատունկին
Support to tree planting in Gnishik settlement



## Առողջապահություն
## Health

• Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families
• Աջակցություն առողջապահության ոլորտում բջջային նույնականացման ծրագրերին
Support to mobile ID programs in healthcare
• Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center
• «Աջակցություն վիրավոր զինծառայողներին և զինվորական հաշմանդամներին» ՀԿ
“Support to Wounded Soldiers and Disabled Military” NGO

## Մարզեր
## Regions

• Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia
• Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Support to community infrastructure development programs in the regions of Armenia



# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES

**Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը**

ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 պետական մրցանակաբաշխությունն անցկացվում է ավելի քան տասը տարի: Մրցանակի գլխավոր գործընկերն է Վիվա–ՄՏՍ–ը: Այս տարի, 2020 թվականի՝ ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 պետական մրցանակին արժանացավ «Սինոփսիս» ընկերության նախագահ և գլխավոր գործադիր համատնօրեն դոկտոր Չի–Ֆուն Չանը:

**Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative**

The State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT is awarded for over ten years now. The General Partner of the Award is Viva–MTS. This year, Dr. Chi–Fun Chan, the President and co–Chief Executive Officer of “Synopsys”, was awarded the State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT 2020.







## Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային

2021թ.-ի դեկտեմբերին տեղի ունեցավ Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային 16-րդ օլիմպիադան: Օլիմպիադայում մրցել է 436 մասնակից ` 13 երկրից: Այս տարի առաջին մրցանակին արժանացել է Հայաստանը ներկայացնող 23-ամյա Ժաննա Խոջայանը, ով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մագիստրոսական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի է, սովորում է «Սինոփսիս Արմենիա»-ի ուսումնական դեպարտամենտում և արդեն աշխատում է ընկերությունում` որպես ճարտարագետ:
Օլիմպիադայի նախաձեռնողն ու գլխավոր կազմակերպիչն է «Սինոփսիս Արմենիա»-ն, իսկ գլխավոր գործընկերը` Վիվա-ՄՏՍ-ը:

## Support to the Annual Microelectronics International Olympiad

The 16th Annual Microelectronics International Olympiad, organized in December 2021, hosted 436 contesters from 13 countries.This year's winner was 23-year-old Zhanna Khojayan, representing Armenia, who is a second-year Master student enrolled in the joint program of the National Polytechnic University of Armenia and "Synopsys Armenia" Educational Department. She is already employed at "Synopsys Armenia" as an R&D Engineer.

The initiator and general organizer of the Olympiad is "Synopsys Armenia", and the General Partner is Viva-MTS.












# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

EDUCATION

## Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում

Ծրագրի շրջանակում Վիվա-ՄՏՍ-ը աջակցություն է ցուցաբերում հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին: Ընկերությունը ստանձնում է մինչև ուսման ավարտը ծրագրում ընդգրկված ուսանողներին օժանդակելու պատասխանատվությունը: Կրթաթոշակային այս ծրագրի նպատակն է կրթությունը հասանելի դարձնել բոլորի համար՝ հիմքում ունենալով խոցելի խմբերում գտնվող ուսանողներին:

## Provision of tuition fee to students of universities of Armenia

Within this program, Viva-MTS provides support to students in special needs, to orphans and to those from socially vulnerable families. The company undertakes the responsibility to support the students enrolled in the program until graduation. This scholarship aims at providing all students an access to university education, especially targeting the ones from vulnerable groups of society.





## Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին

Վիվա–ՄՏՍ–ը՝ Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության (ՏՀՏԳՄ) հետ համագործակցության շրջանակում, մեծ կարևորություն է տալիս խելացի լուծումների կենտրոնների և լաբորատորիանորի ստեղծմանը, ինչպես նաև՝ համատեղ աշխատանքային միջավայրի (co–working space) գաղափարի ներդրմանը:
Վիվա–ՄՏՍ–ի աջակցությամբ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Խելացի լուծումների կենտրոնում արդեն վերանորոգվել է ժամանակակից սարքավորումներով հագեցած վեց լաբորատորիա:

## Support to Smart Solutions Laboratories

Viva–MTS, with the partnership of The Union of Employers of ICT, attaches great importance to the creation of smart solutions centers and laboratories, as well as the introduction of the idea of co–working spaces.
With the support of Viva–MTS, six laboratories with modern equipment have already been renovated at the Smart Solutions Center of the National Polytechnic University of Armenia.







## Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին

2021 թվականի սեպտեմբերին «Hero House»-ում տեղի է ունեցել «Traction» ծրագրի 2-րդ շրջանի տեղեկատվական հանդիպումը: Ծրագիրը նպատակ ունի օգնելու պրոդուկտ ունեցող և արդեն իսկ արդյունքներ գրանցած ստարտափներին արագացնել իրենց աճը և ներդրումներ ներգրավել:

Ծրագրի շրջանակում, կրթական, ֆինանսական, մեդիա, տեղեկատվական անվտանգության, դեղագործության և առողջապահության ոլորտներում տեխնոլոգիական լուծումներ առաջարկող 8 ստարտափերն ինտենսիվ աշխատել են «Zynga»-ից, «CARFAX»-ից, «Dave»-ից, «Fyber»-ից և այլ միջազգային ընկերություններից մենթորների հետ:

«Traction» ծրագիր իրականացվում է «Քաթըլիսթ» հիմնադրամի կողմից՝ Եվրոպական միության՝ «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության ներքո՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (German Development Cooperation – GIZ) կողմից իրականացվող «Տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի աջակցությամբ:
Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատոր Վիվա-ՄՏՍ-ը հանդիսանում է նախաձեռնության կորպորատիվ գործընկերն ու աջակիցը:








## Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House

In September 2021, an information meeting of the 2nd batch of the "Traction" program took place at "Hero House". The program aims at supporting startups already having developed products, with definitive results, to pace up their growth and attract investments.

As part of the program 8 startups offering technological solutions in education, finances, media, information security, pharmacy, and healthcare have closely worked with mentors arriving from Zynga, CARFAX, Dave, Fyber, and other international companies.

The "Traction" program is implemented by "Catalyst" Foundation and is supported by the European Union's EU4 Business "Technology Development for Armenia" project implemented by GIZ.

Viva-MTS, Armenia's leading telecommunications operator has joined the initiative as a Corporate Partner and supporter.





# ՄՇԱԿՈՒՅԹ

CULTURE

## Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին

«Ունիսոն» հասարակական կազմակերպությանը կից գործում է «Փարոս» երգչախումբը, որի երգիչների մեծ մասը հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ սայլակով տեղաշարժվող մարդիկ են: Երգչախումբը հանրության շրջանում մեծ ճանաչում է վայելում և ելույթներով հանդես է գալիս ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրի բեմերում:

Չնայած հանգամանքներին, 2020 թվականին երգչախումբը թողարկել է մի շարք տեսանյութեր, իսկ 2021-ին վերսկսել է նաև համերգային ելույթները:

Վիվա-ՄՏՍ-ը սատարում է երգչախմբի գործունեությանը 2011 թվականից սկսած:

## Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO

“Paros”, a choir acting under “Unison” NGO, is entertaining public renown in Armenia and abroad. Most of the singers in the choir are people with disabilities, including people using mobility devices. The choir is enjoying wide public renown and has given many concerts in Armenia and also on foreign stages.

Despite the circumstances, in 2020 the choir launched several videos, and restarted concerts in 2021.

Viva-MTS supports the activities of the choir starting from 2011.









# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ENVIRONMENTAL PROTECTION

## Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին

Վիվա–ՄՏՍ–ը և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) չափազանց կարևոր են համարում Հայաստանում բնության և շրջակա միջավայրի պահպանության գործում կրթական ծրագրերը, ներառյալ՝ երիտասարդ սերնդի համար նախատեսված բնապահպանական կրթական ծրագրերը և բնապահպանական թեմայով փառատոնի և բազմատեսակ միջոցառումների անցկացումը:

2021 թվականին Վիվա–ՄՏՍ–ի աջակցությամբ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն անցկացրեց հոբելյանական՝ «Արևորդի» բնապահպանական փառատոնը, որն այս տարի իրականացվեց առցանց տարբերակով: Փառատոնի շրջանակում ընտրվել է բնապահպանական 30 ֆիլմ՝ «Լավագույն ֆիլմ անտառային հրդեհների մասին», «Լավագույն ֆիլմ վայրի բնության պահպանության մասին», «Լավագույն ֆիլմ բնապահպանական խնդիրների մասին» և «Լավագույն կրթական ֆիլմ» անվանակարգերում:

## Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets

Viva–MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) put a particular emphasis on educational programs aimed at nature conservation and environmental protection in Armenia, including educational projects for youth, as well as organization of a festival and wide range of events on environmental topics.

In 2021 the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets held the milestone “SunChild” environmental festival, which was organized online, with support of Viva–MTS. As part of the festival, 30 films on environmental topics were selected for “The Best Wildfire Prevention Film”, “The Best Wildlife Preservation Film”, “The Best Environmental Film”, “The Best Educational Film” nominations.



## Աջակցություն Գնիշիկ բնակավայրի տարածքում իրականացված ծառատունկին

Վիվա–ՄՏՍ–ի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) ջանքերով շուրջ 15 տարի իրականացվում է անտառվերականգնման ծրագիր։ 2021թ.–ին ևս բնության գրկում բազմաթիվ ծառեր են տնկվել։ Հերթական ծառատունկը կատարվել է Վայոց ձորի Գնիշիկ բնակավայրի տարածքում։

Վիվա–ՄՏՍ–ի աջակցությամբ տնկվել է շուրջ 200 վայրի պտղատու ծառ։ Ծառատեսակների ընտրությունը հետագայում կնպաստի մարդ–վայրի բնություն կոնֆլիկտի հաղթահարմանը։

## Support to tree planting in Gnishik settlement

For over 15 years Viva–MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets jointly implement reforestation activities. In 2021, too, thousands of trees were planted. Trees were planted in the territory of Gnishik settlement in Vayots Dzor.

With the support of Viva–MTS, around 2000 trees were planted. The selection of trees is expected to contribute to resolving the human–wildlife conflict of the area.










# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

HEALTHCARE

## Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին

Հայաստանում գործող «ՍՈՐՍ» հիմնադրամը համախմբել է հաշմանդամության տարատեսակ խնդիրներով զբաղվող հմուտ մասնագետների՝ ապահովելով աշխատանքով նեղ մասնագիտացմամբ երիտասարդ կադրերի և աջակցելով թիրախային խմբում հայտնված ընտանիքներին ու երեխաներին: Հիմնադրամի նպատակներից է հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին դուրս հանել ինքնամեկուսացումից և վերջիններիս համար ապահովել բնականոն կյանքի ընթացք:

2016 թ.-ից Վիվա-ՄՏՍ-ը մասնակցում է հիմնադրամի կողմից կազմակերպվող տարատեսակ ծրագրերի:

2021 թվականին հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Անհատական օգնական» ծրագրի շրջանակում ներառվել է 20 երեխա, որոնցից 4-ը տեղահանված են Արցախից, 6-ը՝ տարբեր մարզերից, մնացածը Երևանից են: Ծառայությունը մատուցվում է հիմնականում ոչ լրիվ, բազմազավակ, ինչպես նաև անապահով և երկու խնդիր ունեցող երեխայով ընտանիքներին:

## Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families

The “SOURCE” Fund operating in Armenia has united skilled specialists providing professional care to children with disabilities, as well as in creating jobs for young specialists in this sphere, supporting the families in the target group and helping the children. One of the purposes of the fund is to help the children with special needs and their families get out of self-isolation and ensure a normal life for the latter.

Viva-MTS has participated in various projects organized by the foundation since 2016.

In 2021 the “Personal Assistant” program implemented by the foundation supported 20 children, 4 of which are displaced from Artsakh, 6 are coming from various regions of Armenia, and the rest live in Yerevan. The service is rendered mostly to single-parent families, large families, as well as needy families and families with kids having two health problems.









## Աջակցություն առողջապահության ոլորտում բջջային նույնականացման ծրագրերին

Առողջապահության ոլորտում բջջային նույնականացման ծրագրերի ներդրման շրջանակում իրականացվող՝ «Բարև, բալիկ» նախագիծը նպատակ ունի խթանելու մայրերին և մանուկներին մատուցվող առողջապահական ծառայությունների արդիականացումը, ինչպես նաև նպաստելու այդ բնագավառում տվյալահեն և մարդակենտրոն նախաձեռնությունների և քաղաքականությունների մշակմանը: Ծրագիրն իրականացվում է 22 առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ:

Բջջային նույնականացումն աշխարհում զարգացման մեծ միտում ունեցող՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի գործիք է, որի միջոցով ստեղծվում է շահառուների տեղեկատվական շտեմարան, տեղի է ունենում նրանց գրանցումն ու նույնականացումը:

Առողջապահության ոլորտում այս կարևոր զարգացմանը Հայաստանի միջազգային բժշկական համագումարի ստեղծման օրվանից նպաստում է գլխավոր գործընկեր Վիվա-ՄՏՍ-ը՝ աջակցելով և քայլեր իրականացնելով ծրագրի ներդրման համար:

## Support to mobile ID programs in healthcare

The "Barev Balik" project implemented as part of introducing mobile identification programs in healthcare is aimed at facilitating the modernization of maternal and child healthcare services, as well as at catalyzing the development of data-based and human-centric initiatives and policies. The program is implemented in cooperation with the Ministry of Health of Armenia.

Mobile ID is a tool of eHealth - system of a great tendency to development worldwide, which allows to create database, to register and to identify beneficiaries.

The General Partner of the initiative is Viva-MTS, who contributes to this significant development in the healthcare since the first days of establishment of the International Medical Congress of Armenia by contributing and taking steps towards implementation of the program.



### Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ

Արդեն 14 տարի շարունակ, Վիվա–ՄՏՍ–ը աջակցում է «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնին» (ԵԶՄԿ)՝ աուտիզմ ունեցող երեխաներին օգտակար լինելու նպատակով: «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնն»՝ իր գլխավոր գործընկեր Վիվա–ՄՏՍ–ի աջակցության շնորհիվ, 2010 թվականից ներառական կրթական մոդել է ներդրել Մորգենթաուի անվան №126 հիմնական ներառական դպրոցում:

COVID–19 համավարակով պայմանավորված՝ ԵԶՄԿ–ն անցել է հեռավար աշխատանքի և, շնորհիվ Վիվա–ՄՏՍ–ի, կենտրոնին հաջողվել է արտակարգ պայմաններում վերակազմակերպել գործունեությունն ու իրականացնել չափազանց բարդ աշխատանք. հեռավար հարթակում իրականացվել են երեխաների վարքի առցանց դիտարկումներ, տրվել են անհատական ցուցումներ:

2020 թվականի ընթացքում ծրագրում ընդգրկվել է 82 երեխա, որից 20–ը՝ տանն իրականացվող՝ վաղ միջամտության ծրագրում:

### Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center

For 14 years, Viva–MTS has been supporting the International Child Development Center (ICDC) in helping children with autism. With the support of its General Partner Viva–MTS, the International Child Development Center has been implementing an inclusive education model since 2010 at Yerevan basic school №126 after Henry Morgenthau.

Since March 2020, due to the COVID–19 pandemic, the school switched to remote work, and with the support of Viva–MTS, the center managed to reorganize its activities and carry out extremely difficult work even in a situation of emergency: the platform of remote work allowed carrying out online monitoring of child behavior, and provide individual instructions.

In 2020, 82 children were enrolled in the program, 20 of whom took part in the early intervention program implemented at home.





## «Աջակցություն վիրավոր զինծառայողներին և զինվորական հաշմանդամներին» ՀԿ

Վիվա–ՄՏՍ–ը և «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական–հասարակական կազմակերպությունը սկսել են 44–օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինվորների մի մասին օրթեզավորելու համատեղ ծրագիր:

Վիվա–ՄՏՍ–ի աջակցությամբ, ձեռք է բերվել Գերմանիայի և Նիդերլանդների առաջատար ընկերությունների արտադրած 100 օրթեզ: Առաջին խմբաքանակն արդեն Հայաստանում է:

Օրթեզավորման աշխատանքներն իրականացվում են «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում:

## “Support to Wounded Soldiers and Disabled Military” NGO

Viva–MTS and the “Support to Wounded Soldiers and Disabled Military” NGO have launched a joint orthotics program for a group of warriors wounded during the 44–day war.

With the support of Viva–MTS , 100 orthoses manufactured by leading German and Dutch companies, were purchased for the purposes of the current program. The first batch is already in Armenia.

The medical procedures with the use of the purchased orthotic equipment is carried out at the “Zinvori tun” Rehabilitation Center.









# ՄԱՐԶԵՐ

REGIONS

## Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ

«Ֆուլեր տնաշինական կենտրոնը», կարևորելով համայնքների զարգացումը, Վիվա–ՄՏՍ–ի հետ համատեղ շարունակում են տնաշինական և վերանորոգման աշխատանքների իրականացումը սահմանամերձ բնակավայրերում: Աշխատանքները կատարվում են կամավորական հիմունքներով: Այս տարի աջակցություն է ցուցաբերվել թե՛ սոցիալապես խոցելի խմբում հայտնված, և թե՛ Արցախից տեղահանված ընտանիքներին:

Հայաստանի տասը մարզում իրականացվող բնակարանաշինության ծրագրի շրջանակում, Վիվա–ՄՏՍ–ը կատարել է ավելի քան 230 մլն 22 դրամի ներդրում, ինչի արդյունքում 2021 թվականին աջակցություն է ստացել 87 ընտանիք:

## Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia

The “Fuller Center for Housing Armenia” gives high importance to the development of RA regions, and together with Viva–MTS, continues the implementation of house–building and renovation works in border areas. The works are done on voluntary basis. The beneficiaries of this year’s program have included families both from socially vulnerable group, and families displaced from Artsakh.

Within the framework of the housing project being implemented in ten regions of Armenia, Viva–MTS has invested over AMD 230 mln, as a result of which 87 families have benefitted in 2021.











## Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին

Վիվա–ՄՏՍ–ը և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը, տարիների համագործակցության շրջանակում, շարունակում են համայնքներում իրականացնել աջակցության ծրագրեր: Այս տարի ուշադրության կենտրոնում հատկապես եղել են LED–համակարգով արտաքին լուսավորության, ջրամատակարարման և ջեռուցման ենթակառուցվածքային խնդիրների լուծումը մարզային համայնքներում՝ նպատակ ունենալով բարելավել տեղաբնակների կենսամակարդակն ու ապահովել վերջիններիս անվտանգությունը:

Այլընտրանքային էներգախնայող համակարգերի ներդրումը էկոգյուղերի ցանցի ստեղծման կարևոր քայլերից է: Դա թույլ է տալիս գյուղերը ներգրավել կայուն զարգացման գործընթացներում, որոնք հիմված են բնապահպանական, տնտեսական, մշակութային և սոցիալական բաղադրիչների վրա: 2021 թվականին այլընտրանքային էներգիայի աղբյուրների ծրագրում ներգրավվել է 12 գյուղ:

## Support to community infrastructure development programs in the regions of Armenia

The Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) and Viva–MTS continue to implement community support porgrams within the framework of the long–term partnership.
This year, the focus was especially on the infrastructure challenges of outdoor lighting with LED lighting system, water supply, and heating in regional communities, with the aim of improving the living standards and ensuring safety of local residents.

Introduction of energy–saving systems is a major step towards setting a network of eco–villages. It lets engage rural communities into processes of sustainable development anchoring on environmental, economic, cultural and social components. In 2021 the program for introduction of alternative energy sources has covered 12 villages.







# Բովանդակություն
# Table of Contents


**Ողջույնի խոսք**
**Welcome address** ... 2

**Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ**
**Information and Communication Technologies**

Աջակցություն «ՏՏ ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative ... 8

Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad ... 10

**Կրթություն**
**Education**

Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
Provision of tuition fee to students of universities of Armenia ... 14

Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին
Support to Smart Solutions Laboratories ... 16

Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին
Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House ... 18

**Մշակույթ**
**Culture**

Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO ... 22

**Շրջակա միջավայրի պաշտպանություն**
**Environmental Protection**

Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Asets ... 26

Աջակցություն Գնիշիկ բնակավայրի տարածքում իրականացված ծառատունկին
Support to tree planting in Gnishik settlement ... 28

**Առողջապահություն**
**Health**

Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families ... 32

Աջակցություն առողջապահության ոլորտում բջջային նույնականացման ծրագրերին
Support to mobile ID programs in healthcare ... 34

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Chid Development Center ... 36

«Աջակցություն վիրավոր զինծառայողներին և զինվորական հաշմանդամներին» ՀԿ
“Support to Wounded Soldiers and Disabled Military” NGO ... 38

**Մարզեր**
**Regions**

Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia ... 42

Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Support to community infrastructure development programs in the regions of Armenia ... 44



Վիվա-ՄՏՍ
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ.՝+37460771111, +37493568777
Ֆաքս՝ +37493298021
4/1 Argishti street, Yerevan 0015, RA
Tel.: +37460771111, +374 93568777
Fax: +374 93298021
www.mts.am, info@mts.am